ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց

ՊՈԱԿ

Արզումանյան-5, հեռ.՝ (+374 10) 391080, էլ. փոստ՝ school122@schools.am

№724 «18» ապրիլի 2024թ.

# ՈՐՈՇՈՒՄ

**Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ**

«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2023-12-11-ին հրապարակվել է «ԹԽՎԼ122-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ընթացակարգը ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին մասի հիման վրա, որին հայտ է ներկայացրել նաև «Անսերվ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 19 դեկտեմբերի 2023թ-ին կայացած նիստում «Անսերվ» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի համար և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով մասնակցին ներկայացվել է «ԹԽՎԼ122-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով պայմանագրի նախագիծը, որը վերջինս սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված և կնքված ներկայացրել է: Ֆինանսական միջոցների հատկացման մասին համապատասխան համաձայնագիրը 16 փետրվարի 2024թ-ին և 20 փետրվարի 2024թ-ին ուղարկվել է մասնակցին՝ հայտում նշված էլ.հասցեով՝ **unservllc@gmail.com**, սակայն մասնակցի կողմից համաձայնագիրը ստորագրված և կնքված տարբերակով չի ներկայացվել:

2024-04-02-ին gnumner.am կայքում հրապարակվել է ԹԽՎԼ122-ԳՀԾՁԲ-02/24 ծածկագրով կնքված պայմանագրի միակողմանի լուծման ծանուցումը, զուգահեռաբար ուղարկվել է մասնակցին:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Անսերվ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ գնումների մասին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, մասնավորապես՝

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.*

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. «Անսերվ» ՍՊԸ-ի նկրտմամբ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին ՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, «Անսերվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանագրին չկատարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացից տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Անսերվ» ՍՊԸ | 08265173 | Գ.Էջմիածին, Վ.Վաղարշյանի փ., 52ա | | x | x | 18.04.2024թ ՅՄԿ-ՎԱ122 ԳՀԾՁԲ-02/24 |

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:**

Տնօրեն՝ ______________________ Կ. Մխիթարյան